

գիտենք անոնց բովանդակութիւնները. անապահովութիւն կեանքի, պատուոյ, ստացուածքի և անարգարութիւն գատաստանական ատենի ևն. և այլն: Ուրեմն Հայաստանի հայերուն վիճակը բարոյքելու համար, նախքան դամենայն այն միջոցները պէտք է գործ դնել, որ ի հարկին նպատակայարմար լինին. զոնէ մասամբ:

Քանի որ չիկայ ազգային կեանքի ապահովութիւն, քանի որ կայ քիւրս, թիւրք և ուրիշ բարբարոս ցեղերու վայրագութիւնները, հայ մնալ, հայ ապրիլ, մեր խեղճ գոյութիւնը պաշտպանել—այն ալ առանց զէնքի—անկարելի է. նոյնիսկ եթէ ցանկայ ըլլոր սրտէ պաշտպանել թուրք կառավարութիւնը անդէն հայուն, զինել մահմետականներու բարբարոսութեանց դէմ, զարձեալ անհատատալի և անկարելի է. որովհետեւ ըլլոր այն ուժը որ պիտի զսպէ այդ բարբարոսները, ինքը արդէն բարբարոսներէ կազմուած է. ուրեմն հայ ժողովրդին իրեն հնարաւորութիւն տալու է ինքնիրեն պաշտպանել, և այդ ուրիշ կերպ կարելի չէ ընել, եթէ ոչ զինել հայ ժողովուրդը, ինչպէս մեր գրացի բոլոր միւս ազգերը, որպէս զի ի հարկին կարենայ ինքզինք պաշտպանել այդ բարբարոսներու դէմ: Ամեն մարդ, ո՞վ որ ծանօթ է Հայաստանի ու հոն գտնուած վայրերի մահմետականներուն մեզ հետ կը համաձայնի որ անկարելի է այլ կերպ ապրիլ այն երկրի մէջ և գոյութիւն պահպանել առանց զէնքի. չէ որ թուրքը կազմող բոլոր ցեղերը կը կուռն ու կը մրցին միմեանց հետ, սրով միայն: Ինչո՞վ կարող է ընդդիմադրել անդէն հայը այդ վայրերին: Հիմա մեր կողմէն ո՞ր է խորհուրդ տալ «Մարտին զէնքի հարկաւորութեան մասին»—քանի որ ինքն ալ

կընդունի կրետայիները մէջ բերելով—այնքան ամօթ է, որքան ամօթ է էրիկր կնկան լաթ հանելու և հագցունելուն մէջ: Ես համոզուած եմ թէ «Մարտին» քննարկը կարեւորութիւնը հասկցած է, սակայն երկու յայտնի պատճառներով չի հասկնալ կը կեղծէ. մէկ որ զէնք բառը իրենց «քեռուն» ականջին խիստ ցուրտ կը հնչէ, երկրորդ որ անգամ մը սկսեր ենք շարունակենք:

«Նոր կեանքի» 4—5 թիւ առաջ էր որ կըսէր, Ալաշկերտի կուռն առթիւ... ուսական սահմանէն ներս խոժոյ հայեր, անարգելի Ռուսիայէն զէնք և ուղամթերք կտտանան: Ուրիշ սեղմը կըսուի թէ Պարսկաստանէն թուրք սահմանը անցնող հայերու հետ—որոնք օսմաննան զօրքերու հետ ընդհարումներ կուռնեն—այսինքն կանոնաւոր զօրքեր ալ կան... ուրիշ կտտանայ «Նոր կեանքի» խմբագրութիւնը այս լուրերը: Հանելուկը լուծուեցաւ, եկաւ վերջնապէս «Դրօշակ» յաւելուածը ու ալ ամէն բան պարզուեցաւ. Արիւստի կուռն տուած փուշերը կոկորդը մնաց խեղճին:

Աւերակցի

Ուտար, 20 Մարտ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՐԿԱՋ, 17 Մարտ

Այսօր պատահամբ ձեռքս անցաւ տեղւոյդ շարթթած թերթը որուն մէջ մարդ փոխանակ իր իսկական պատկերի բոլորովին հակառակը կը տեսնայ: Հոն 3 մարտ թուականով Պուրկազէն թղթակցութիւնը մը «Ականատես» ոտորագրութեամբ որ «Իրաւունք» ինտերվար 26 թուին մէջ «Պուրկազի ազգային լիճակը» խորագրով գրուած յօդուածի մը մասին խօսելով կըսէ թէ «Արդարեւ շատ ուրախ պիտ

տի ըլլար եթէ յօդուածագիր Պ. Յոլակի փոխանակ շոգոքութեւլ, ամեն բան իր իսկութեան մէջ նկարագրած ըլլար»: Եւ իբր թէ Պ. Յոլակի գրել չուզածը «Օգնասէր Հայու հեաց» ընկերութեան նկատմամբ ինք կը հաճի իբր իրողութիւն պարզել ժողովրդին բոլորովին սխալ և զրպարտութիւններով համեմուած: Ուրեմն պարտք կըլլամ խեղիքը համառօտակի պարզել «Շարժում» ընթերցողաց հանրային կեանքը չը թունաւորելու համար:

1896 թուին քաղաքիս տիկիններէն կազմուած «Օգնասէր հայու հեաց» ընկերութիւնը, տարտան մը աշխատութեամբ կը յաջողի 40 ոսկոյ գումար մը հաւաքել և կը յանձնէ զայն Պուրկարական դրամատունը և անկից պէտք եղած ստացագիրը առնելով կը յանձնուի ընկերութեան գանձապետուհի Տիկ. Յակոբ Տէմիրճիպաշեանի: Գալուստ Ունձեանի ատենապետութեամբ կազմուած նախկին Թաղ. Խորհուրդը ինչպէս կըլլայ, կը յաջողի յիշեալ ստացագիրը ձեռք ձգելով իր քով պահել, Վերջերս երկաթթու գործ Յակոբ Տէմիրճիպաշեան իր երկու եղբարց և ուրիշ երկու երկաթագործներու ընկերակցութեամբ կաշխատի այդ 40 ոսկոյ գումարը ձեռք անցնելով սրճարան մը բանալ իրենց փորթ խընդիրը կարգադրելու համար: Ուտար Տէմիրճիպաշեան Յակոբ կը համոզէ իր կինը որպէս զի իբրև գանձապետ դրամական ստացագիրը պահանջէ Ունձեանէն: Այս պահուն արդի թագական խորհրդի մեծարգոյ տոննապետը Տեար Սրայ Աստուածատուրեան լսելով որ Ունձեանի քով առանկ թույլ մը կը գտնուի, զինքը տեսնելով կը պահանջէ զայն, խօստանալով միանգամայն գրամը գանձելով յիշեալ երկաթագործներուն քով տոկոսի գնել:

Ասանկով կը յաջողի ստացագիրը ձեռք ձգել ու գրամը գանձել:

Այս միջոցին տեղւոյս հոգաբարձութիւնը իմանալով որ օգնասէր հայու հեաց 40 ոսկին Տ. Աստուածատուրեանի քով կը գտնուի, որ մտադիր է տոկոսի գնել յիշեալ անձերու քով, անմիջապէս կը գրիմէ իրեն և կը պահանջէ որ գրամը ոչ մէկուն չը յանձնէ, առարկելով թէ այդ գրամը արդէն իսկ վարժարանի մը շինութեան համար հաւաքուած ըլլալով մտադիր է ամառը վարժարան մը կառուցանել այդ գումարով հակառակ պարագային կուպուռայ իրեն գանձել զայն լիովին: Ասոր վրայ Տեար Աստուածատուրեան կտոկոսի դրամը ոչ մէկուն յանձնել և կը պահէ զայն իր քովը:

Ահա իրողութիւնը զոր Պ. Ականատեսը ուղած է խեղաթիւրել: Կերեւի թէ կամաչքի ակարութիւն ունի որ լաւ չէ տեսնել իրողութիւնը և կամ խեղքի խանգարում, որ չէ կրցած լաւ մը ուսումնասիրել խեղիքը և կամ այն է որ կուսակցական հակառակութիւններով զինուած թաղ. խորհրդի գէմ կուզէ վարկարեկ ընել զայն, անբնական սուտեր կըլլեցնել ուղելով ժողովրդին: Հետեւաբար Պ. Ականատեսի իր յօդուածին մէջ յիշած զրոյցը թէ «խաթեր համար հում հաւ կուտուր» ճիշդ խօսելով աւելի իրեն կը պատշաճի քան թէ Պ. Յոլակի որ փոխանակ շոգոքութեւլ ինչպէս կըսէ ինք: խորհրդին գործունէութեան մասին խօսելով համեստօրէն զանցըրած է յիշել խեղիքը, որով պատուարժան խորհուրդը մեծ ծառայութիւն մը մատուցած է ազգին վտանգուած գումարի մը գոյութիւնը ապահովելով:

Երանի թէ սասանկ տկար ականատեսներ պակաս ըլլային մեր մէջէն որոնք հազիւ թէ գրիշ շարժել կը սորվին, անձնական կամ կուսակցական հակառակութիւններէ մղուած, կսկսին սուտնուիրաւ իրար խառնելով յօ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՈՅ ԱՆԻՍՐԶԻ ԱՆՅԲԵՐ, ՊԱՏԵՐԱՋՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ, ԵՍԿՈՒՄ



Բիւրոսերը Սուրբ Կարապետի միաբան ըլլալն իմանալով, կը խոստանան զիրենք մինչև Սուրբ Կարապետ ողջ և անմահ հասցունել, եթէ անձնատուր ըլլան:

Կարապետը չընդունիր, այլ կառավարէ որ իրենց ել-աղաւթն (ցեղապետ) Իպոյին միմիայն կրնայ յանձնուիլ: Քիւրոսերը մարդ ուղարկելով Իպոյն բերել կուտան և անոր հետ բանակցել յետոյ կը յանձնուին: Իպոյն զանոնք իր հետ առնելով, իր

գիւղը Վերի Պաղու կը տան: Այդ ժամանակ Իպոյի գիւղին մէջ, վարդոյ գաւառէն Սըլզան գիւղացի ըէյիս Մեղրոն գտնուելով, անցուղարձի մասին լաւ մը տեղեկանալէ յետոյ գիւղ կը վերադառնայ, և անմիջապէս երկու մարդիկ պարաստելով գիշերով Սուրբ Կարապետ Մամբրէ կպիսկոպոսին կը զրկէ, խնդրոյն էութիւնը նոյնութեամբ նամակաւ մը իմացնելով, Մամբրէ Սրբազան այդ զէպը իմանալուն պէս, շուտ մը գալազ մը և երկու օտապաշիներ Իպոյին զըրկելով մարդերը կը պահանջէ:

Է-աղաւթ Իպոյի գիւղը՝ Սուրբ Կարապետէն երեք ժամ հեռաւորութեան վրայ ըլլալով, գալազը իր ընկերներով կէս օր չեղած հոն կը հասնի. Մամբրէ Սրբազանէն տարած նամակը կը յանձնէ և մարդիկը կը պահանջէ: Իպոյն առանց ստարկուելու, նոյն օրը ինքն և 25 ձիաւորներ իր հետ առած, գալազի առաջնորդութեամբ Սուրբ Կարապետ կիջնէ և Մամբրէ

Սրբազանին կը յանձնէ իրենց ամէն ինչքերով ու կը վերադառնայ:

Այսպէսով Գանը-Տէրէի զէպը կը վերջանայ, ստանց կառավարութեան ականջն հասնելու: Կարապետը իր ընկերներով քանի մը օր Սուրբ Կարապետ մնալէ ու Մշոյ գազար պատելէ և իր գաղափարակից բարեկամները տեսնելէ յետոյ օր մըն ալ զէպի Պիթիւսի կողմերը կը մեկնի: Ճանապարհորդութեան միջոցին կրկին ընդհամար մը կը բռնուի քիւրոսերու հետ, Ազերիս և Մորիս կոչուած քիւրս գիւղերու մէջտեղ, Օձն քաղաքի աւերակաց մէջ, քիւրոսերէն երեքը սպաննելէ յետոյ, Համբութ լեռ կապատանին ու գիշերով կանհատանան: Այդ ընդհարման լուրը կառավարութեան հասնելով, հետամտեցաւ ատոնց ով ըլլալը և ուրից գալն իմանալու, որով այդ միջոցին Գանը-Տէրէի կուռն ևս կառավարութիւնը վերահասու եղաւ, թէ Սուրբ Կարապետի առաջ, Մամբրէն

այդ մարդիկը ձայրանի աչիթի ճանկերէն ազատելով իր քով առած է, այդ պատճառաւ ալ կառավարութեան կողմէն վերի վերայ վանքը խողարկելու կերպարանք տրուեցաւ հարկարպետ Սասըզ աղայի ձեռամբ:

Հայրենասէր անհասնելու երևնալն և այսպիսի փոքր շարժումներն կրկին վանդակի մէջ փակուած Սրբի փաշան կառողցուցին. սկսաւ մեթմոթալ անուղղակի ձեւերով քիւրոսերուն ուժ տալով, այդ միջոցին ստակալային խուճարկ երևնալ սկսան Մշոյ հիւսիսային կողմ, Համանցի աչիթի լէն Մէնթա Ալի անուրով մէկը: 14 ձիաւորներով սկաւ ասպատակալ ազատ համարձակ հայ գիւղերու մէջ ամէն տեսակ անխղճութիւններ գործելով: Սորաւ գիւղի քահանայ Կարապետեան Տէր Յիշիկի մօրուքը բռնել տալով, քաշկուտէն գիւղէն գուրս հանել տուաւ, այսպիսի շարժարանքով խեղճին մօրուքը փետտե

գուածներ տալ, միակ նշանակ ունենալով ազգի գործերը աշխատելով վիճակի մէջ պահել միշտ ու անոր շահերուն զէմ գաւազաններ :

ՖԻԹ

ՆԱԿԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

(Շարժ. նախորդ քիւնն եւ վերջ)

Վրայ կը հասնի այս ամսոյ մէջ Աւետիս պարտնեանի մասը, եւ առաւելուն քաղաքիս հրատարակներուն պատերուն վրայ կը տեսնուի բնասանեացը կողմանէ փակուած մահազը ծանուցանող հանդիմանի մասը. կատարուելիք յազարկատարութեան հանդէսին օրը, յետ որոյ հանդիմանի «մարմինը ազգ. գիւրեզմանատուն» ամփոփուելիքը : Կէս օրէն յետոյ Պ. Իգնատ. հանդուցելոյն եզրօրդիին փառ խորհրդոյ կը ներկայանայ եւ կուզէ յուզարկատարութեան հանդէսի սակայինը սեւեւնել : Թաղականութիւնը կը բացատրէ թէ նշանակալի ընտանեաց համար Արտակարգի աստիճանը վայելուչ է : Տեսար իգնատ թէ արտակարգին եւ թէ Ա. կարգի աստիճաններուն քացատրութիւնները : Ընդօրինակել անշուք կը փայտաբեր ընտանեաց հետ խորհրդակցելի : Ինչ որ թոյլ կը տրուի իրեն եւ թաղականութեան կողմանէ կատարուի որ հանդուցելոյն մարմինը եկեղեցոյ քահանայ մէջ ամփոփուի, որն որ թէ ընտանեաց եւ թէ ազգին պատիւ մըն է. ասոր համար օրինակ կը բերէ հանդուցելու Ռուբէն Մանուկեանի վախճանումը եւ եկեղեցոյ քահանայ մէջ ամփոփուելը : քացատրելով միանգամայն թէ ասոր համար սեղան կատարուած թաղականութեան թաղականութեան հրոման պէտք է անուշ, որ միայն այն պարագային մէջ կարտուուի, երբ հանդուցելու քարձրաստիճան եկեղեցական մը է կամ ժամանակուաներու Ազգին յիշատակի այժմանի բարեբարութիւն մը ըրած է կամ այժմ կողակած է ընել եւ կամ իր ընտանիքը այժմ բաւական զուտար մը կուտայ ազգին : հոս յիշուած է իրեն հանդուցելու Ռուբէն Մանուկեանի համար նուիրուած 3000 ֆրանքի զուտարը. եւ կրկնակի կերպիւ խնդրուած է իրմէ որ այս առաջարկը ընդունի հանդուցելոյն ընտանեաց կողմանէ ի պատիւ իրենց եւ յօգուտ ազգին :

Տիար Իգնատ կը մեկնի ժամէ մը վեներականալու խոստամար ու կը գտնայ 2 ժամէն թաղականութեան յատնելով թէ արտակարգի թաղական աստիճանը չէ ընդունուած. կը փափաքէն Ա. կարգի աստիճանը անուշ. կը յայտնէ նաեւ թէ, եկեղեցոյ քահանայ մէջ ամփոփուելին այ չէ ընդունուած, գիւրեզմանատունը աւելի օրուէս սեպտեմբր. միանգամայն թէ ինք մեծնելէն վերջը սաքէն բռնեն ծովը նաեւն նշանակութիւն չունի : Թաղականութիւնը չատ կը ջանայ համոզել Պ. Իգնատը որ ընդունի մարմինը եկեղեցոյ քահանայ մէջ ամփոփուելին : այդ առթիւ խոստանալով աւելի զիւրամարտիչի պայմաններով յաջողցնել զորքը թաղականութեան քով. նոյնպէս Ա. կարգի թաղական աստիճանէն այժման գոն չմիայնելին քացատրելի վերջ : արտակարգ թաղական աստիճանը միայն այսօրինակ ընտանեաց համար յատկացուած լինելը յայտնելով, սակայն ամեն ջանք անօգուտ եղած է զինքը համոզելու երկու ձևին համար : ալ : Հոս թաղականութիւնը կը փորձէ Տ. Իգնատին միջամտութիւնը խնդրել հանդուցելու Տօթթօր Թովմասեանի թաղական հանդուցելու կարգադրութեանը համար. եւ որով վերջ տալու այդ անհաճոյ խնդրոյն, նկատի տանելով թէ այժմ երկուքն այ մի ընտանիք կը կազմեն. սակայն Պարոնք յանազնկայս կը պատասխանէ, «եթէ այդ օրինակ հայրենի հանուին Պուլիարաց եկեղեցին պիտի զիմէ» :

Թաղականութիւնը կը հասկնայ թէ սպանուելիք մը չէ իրեն առաջարկուածը. այլ պարզ միջամտութիւն մը, եթէ կարելի լինի, թէ ոչ ըսելիք մը չունի : Հետեւաբար լաւ ստուգած է թէ բոլորովին սուտ է թէ սեւեւ ազգային մը միջամտած լինի այդ մասին. ուստի Ա. կարգի թաղական փոխարէնը ստանալով յիշատակի յանձնած է նոյն կարգի հանդէսի մատարմանութիւնը ինչ որ պիտի կատարուելին հանդէսին համար, յայտարարելով միանգամայն թէ Ա. կարգի մէջ սեւեւում մանրամասնութիւններէ զատ խորհուրդը բան չի պիտի կրնայ աւելցնել հանդէսին եւ ոչ ալ զուտն լինելիքները պիտի ընդունի : Հետեւեալ օրը որ թաղական օրն էր, առաւելուն ջաղականութիւնը կը սեղանայ թէ ուղղակի նշնեցելոյն ընտանեաց կողմանէ արտակարգի աստիճանին մէջ սեւեւում մանրամասնութեանց

համեմատ եկեղեցոյ եւ քահանայ գուոր սեւ շարժներով կը պատուեն, եւ այդ կարգի պատրաստութիւն կը լինին արտակարգի աստիճանը չը վճարելով զայն ընելու գծու հայրենիքով. եւ թաղականութեան հովանաւորութեան ներքեւ գտնուող զարաց զատուն համար պահանջուած 100 ֆրանքը չը վճարելու համար, ուղղակի այս վերջինին հետ սակարկութեան կը դիմուի : որ կը մերժէ յայտարարելով թէ ինք թաղականութեան կախեալ է : Թաղականութիւնը ի լուր այս ամենայնի տեսնելով թէ այսպէս ինչ եւ գծու հայրենիքով ոտնձգութիւններ կը լինին ազգային խնդրէ եւ մանկուտոյն զատարարութեան համար յատկացուած շահուն եւ իրաւանց կը հրամայէ իր պաշտօնէն զարտուելու գուորնիւն վրայ պատաստուած սեւ շարժներն եւ խտրել կը պատուիրէ քահանայից եւ պաշտօնէից հրամանագրէն դուրս մազի չափ ոչ աւելի ոչ պակաս բան մը լինի հանդէսին կատարման մէջ եւ ոչ փակ դուրսն լինելիք : ու է կարգադրութիւններ ընդունին : Արդէն ամենամեծ աստիճանի անքաղաքավարութիւն մը է հանդուցելոյն ընտանեաց կողմանէ բանի կերպիւ եկեղեցոյ եւ քահանայ զուտն սեւեւացնելը : բան մը որ եթէ արտակարգ աստիճանին ալ ոտնձգութիւն եղած չըլլար թաղականութեան կը վերաբերի այդ պատիւն ընել եւ այն ալ արժանաւորին. բոնի կերպիւ չը լինի եթէ հանդուցելոյն ընտանիքը արտակարգի աստիճանին 558 ֆրանքի տեղ Ա. կարգի աստիճանին 120 ֆրանք վճարելով գծու հայրենիքով կը ջանայ արտակարգի երեւոյց տալ հանդէսին բնակուն էր թէ թաղականութեանն եւս այդ կարգի հայրենիքով իր իրաւանց բռնաբարութեան չի պիտի թոյլ տար եւ յազարկուտարութեան հանդէսը կը կատարուի համաձայն իրեն վճարած Ա. կարգի թաղական աստիճանին : Սուտ իսկ է այն լուրը թէ Տէր Սարգիս քահանան սեղոյս ազգական մասնաւոր վարժարանին կողմանէ ի պատիւ հանդուցելոյն եկած ուսանողաց պատրաստութիւնը իկեղեցին արաքսել ուզած լինի որոյ համար սեղանայ թերթիւն մէջ արդէն հերքումը սեւեւում լինելով, շարժել այդպիսի բնականին հակառակ սուտ մը վրայ երկարաբանել : Բացարձակ սուտեր են նաեւ թէ հանդուցելոյն ընտանեաց կողմանէ

թաղականութեան 3000 ֆրանքի ու է արաքսել մը եղած լինի մարմինը եկեղեցոյ քահանայ մէջ ամփոփուելու համար, ասոր քացարձակ սուտ լինելը թաղականութեան վերոյիշեալ ազանք ու ջանքերէն զատ, նոյն իսկ թաղականութիւնը տեսնելէ առաջ իրենց հրատարակ հանած համազգին ալ կապացուցանէ, որոյ մէջ այլապէս յայտնուած էր իրենց որոշումը : Իրաւ է թէ թաղականութեան պէս զուտն զանազան անձնաւորութիւններ ալ շատ ջանացած են զիրենք համոզելու այդ բանին, սակայն իրենք պարզապէս զրոյս չտալու համար զանազան անպատուարի պատրուակներով մերժած են :

Սոչոր սուտ մըն է նաեւ թաղականութիւնը ներում խնդրող թաղական մը չգործուած սխալ մը ուղղելու ջանացած լինի. ընդհակառակը իրենք իմանալով Տեսար Տ. Ս Փափաղեանի յիշեալ նախատալից գրութեան վրայ ընդհանուր դատախազին դիմելու համար թաղականութեան կողմանէ արուած որոշումը, որ բաւական ծանր պատժոյ կրնայ ենթարկել նամակագիրը. միջնորդներ դրած են այդ չընելու համար :

«Սուրհանդակ» թերթը իր միամտութեամբը այս ամեն սուտեկան վրայ յենելով, թաղ. խորհրդոյ հանդէսին ակնարկութիւններ ընելէ յետոյ կը յաւելու թէ ամեն տեղ Պարոնեանի պէս ընտանիք չի գտնուիր. կերելի թէ ինքը կամ լրատուն քաւական գոն միացած են այդ սուտերուն հրատարակմամբը, սակայն ես կը կարծեմ հաւաստի իսկ եմ թէ այժմեան թաղականութեան անդաները այնպիսի անձնաւորութիւններ են, որ եթէ ապացուցուի յիշուած թէ իրենց կողմանէ ու է սպորինաւորութիւն եղած է, ազգը այսպիսի շահ մը զրկելու պատրաստ են իրենց վրձարել այդ գումարը, եթէ հակառակ պարագային այդ Պարոնեան ընտանիքն ալ պարտաւոր լինի զայն վճարել, զոր այնչափ առասպառն կը ներկայացնէ «Սուրհանդակ» թերթը :

Իսկ յիշեալ ընտանիքին որաստիճան առասպառն ըլլալը : եթէ վերոյիշեալները բաւական չեն հասկըցնելու «Սուրհանդակ» Տեսար խրմապրին ես թէ մէջ պիտի բերեմ հետեւեալներն ալ, որ տեղի ունեցած են մահուանէն առաջ, առանց հակառակութիւն ունենալու ու է թաղականութեան հետ :

տեղով. Արտիքը գիւրի մէջ եղիազար անուշով մէկի ամորձիք բռնել տալով կոտեց, առանց պղտիկ ընդդիմութեան մը իսկ հանդիմանու կատարուած թեան կողմէ : եւ այսպիսի շատ սեւակ գազաճութիւններ կը գործէր. ստոր օրինակին հետեւեացան նոյն աշիւթի մէջ Չալալ, Սարհընկ, Ալիէ Հազիմէ, Լ. մըրէ Ֆասմէ, այսպէս եւ շատեր մէկգմէլէ անջատ գործելով : Այսպէսով քիւրս ապաստակութիւնն երթալով կը ձիւղաւորուէր եւ յայն ծաւալ կառնուր Մշչ արեւելեան կողմի Չառքըի աշիւթի քիւրսերն իւս կատարուած թեան թոյլտուութեանն ու անտարբերութեանն քաջաւերելով սկսան քիւրս Բանոյին հետեւել, իրենց մերձակայ հոյ գիւղերը կողպատելով :

Սրդէն առաջու չէ շիւրու ու հօճաներու պատուէր արուած էր ճամբներու մէջ իսլամ տարրն զրգուել հայոց զէմ. ասոր համար հակակրութիւն երթալով սուր կերպարանք

կառնուր եւ օր ըստ օրէ ճնշումները եւ հարստահարութիւնները կը կրկնուէր : Երբ ու կուսակառուիէր : այդ միջոցին Օրկնոց գիւղացի սարկաւազ Յակոբ : կառավարութեան թուրութեան եւ անտարբերութեան զէմ կրկին բողբուլու պատրաստուած երեք մահախաղութիւնք ձեռք առած գիւղէ գիւղ կը պտըտցունէր ստորազրկու համար, գործով մը Մուշ անցնելով, վերադարձին արքած ձի կը նստի, ճամբան ձիէն վար կիշնայ, ձիէ շիտակ ես կը վերադառնայ եւ կառավարութեան գուրու կանդ կառնէ. ստիկաններն տալ անցնելով կը բռնեն, եւ վրայի խուրձինը վար կառնեն, բայց միջոցին երեք մահախաղութիւնք գուրս կուգայ, եւ ձիւն շիտակ Սալէին կը յանձնուի, մինչև որ ատոր տէրը ով ըլլալը իմացուի : Բաւական անցնելէ յետոյ սարկաւազ Յակոբը կը սթափուի, ու կը ստիպուի եւ վերադառնալ, իր ձիւն զտնելու համար. Մուշ կը մտնէ եւ

ձիւն շիտակ Սալէին տունը կը գտնէ. կառավարութիւնը իմանալով կը բռնէ ու բանտ կը նետէ, երեք տարի շղթախակապ պատիժ տալով : 1870 թուականին, սոյն քակող ու քանդող հայալին թրքաց ընթացքը նախատեսող մեր լաւ կրօնականանկար բնական է որ չի պիտի կրքնային անտարբեր նստիլ, սպասելով կրքատարեր աւուր. այլ ուղղակի եւ անուղղակի միջոցներ ձեռք առնելով, լաւ կարելոյն դիմադրական ուժ մը պատրաստել, ամենէն լաւ գործողութեան միջոցն ընտրելով զարդներու ուժ տալ : Ինչպիսիք էին իրիմեան հայրիկ եւ Կեր. Գարեգին Սրուանձանեանց, որ երբ Սուր հարապետի առաջնորդութիւնը իրենց տրամադրութեանց յանձնուեցաւ, իրենց առաջին քայլն եղաւ զարդի յառաջգիմութիւնը ըստ այնմ հին զարդական ծրագրերը անպէտք համարելով նոր ծրագիր մը գուրս բերին. այդ կարգադրութեան համաձայն, լաւ

պատմաբան դատաւոր մը Պոստոլէն բերել տուին, ազգային ոգով կըրթուած աշակերտներ հասցնելու, եւ այս ձևով նոր դարի մը տունն : Սուրը Կարապետի զարդէն 10—12 տարուան մէջ ըստ բաւականին աշակերտներ գուրս եկան, ներկայ պահանջմանց ոգով կըրթուած, որով հարկ կը համարեմ աստ քանի մը հատ զո՞ւտեաներ յիշել, ցոյց տալով թէ զարդի սեմէն ինչպէս յեղափոխութիւնը ծագում առնելով գուրս եկաւ : Մշչ գաւառներու մէջ, «մէկէ մեկի զարդներն, միւսը գարձուր», հարկուտար տարիներ ամբողջ հայ ժողովրդեան սրտին մէջ արմատացած առածը, առանց այլալըման ինչպէս մէկի ձգելով «ակն ընդ ակն» վազեց իր գոյութեան պահպանումը, եւ իրրեւ մարդ ապրելը, այդ երկու բառի մէջ նախատեսելով : ՄԱԿԱՐ ՅՈՒՎԱՆԵԱՆԻ

(Շարունակելի)

Երկու տարի առաջ տեղեւոյս հր-
կիզեալ ազգ. վարժարանին շինու-
թեան ատեն բացուած հանդանո-
կութեան մասնակցելու համար նոյն
ժամանակուան թագականութիւնը
անձամբ իր սուսը երթալով երկար
հաւոյն խօսքերէ յետոյ միայն
կրցած է փրցնել նախընտրուածը . յետոյ
թագականութեան զգաստացու-
ցիչ խօսքերուն վրայ հազիւ նարու-
ղիւնը երկու թի բարձրացուցած է .
մինչդեռ տեղեւոյս արհեստաւոր դա-
սակարգը ուրախութեամբ 100-ական
Ֆրանք նուիրած են : Անցեալները
սովորոց համար Պարիսի վարժարանէն
եկած շրջաբերականին վրայ ինչպէս
շատերուն իրենց ալ անձամբ գացած
էր Կեր. այցելու հովիւր բայց սեւ
սուրճէ մը զատ ոչինչ չէր կրցած
ստանալ այսքան պարտաւորիչ հան-
գանակութեան մը համար :

Իմ նպատակս յիշեալ ընտանիքը
վարկաբեկ ընել չէ, սակայն չէի կր-
նար անտարբերութեամբ կարգալ
«Սուրհանդակ»ի մէջ իրողութեանց
այնքան բացարձակ խեղճութիւնով .
նոյնպէս եւ յիշեալ ընտանիքը բարձ-
րացնելու համար Կեր. այցելու հո-
վուին եւ թագականութեան զեմ
այնքան անիրաւ եւ անտեղի շարձա-
կութիւնը . ցաւալին հոն է որ «Սուր-
հանդակ»ի նման Պոլսոյ ստանա-
կարգ մի թերթ թոյլ կուտայ իրեն
այսքան միամտութիւն ցոյց տալ իր
արժանիքը ոտնակոխ ընելով . ով
զիտէ ինչ նկատուներով . եւ որով
ընթացողաց դատողութիւնները մո-
լորեցնել սուտ եւ անտեղի լուրերով .
զի ընդունուած կանոն ու սովորու-
թիւն է որ այսպիսի տեղեկութիւն-
ներ կանխաւ տանց տուգուելու
չեն հրատարակուիր :

ԻՐԱԶԵԿ
Վառնա, 27 մարտ

Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Ռ. Փ

Թրգու-Օդես, Արժ. Յ. Վ. Ս. —
Ձեր զրկած ու թ ֆրանքը ժամա-
նակին ստացուած է .
— Յասթոլո, Պ. Տ. Յ. — Յայ-
տարարութեան համար ձեր զր-
կած գրամը ստացուած է .
— Ալէքսանտրովա, Պ. Ա. Ղ. —
Ձեր եղբորմէն ստացուած քանցեալ
տարւոյ բաժնի գրինը .
— Ամերիկայ, Պ. Մ. — 3 սո-
լարը ժամանակին ստացուած է .
— Ամերիկայ, Վարդ Մանուշակ .
— Ձեր զրկած չէքը ժամանակին
ստացուեցաւ . բայց շատ դժուա-
րութիւններ քաշելով կրցանք
գրամի վերածել . կը խնդրենք
միւս անգամ ուղղակի փոստայով
կամ պուլկարական աղջ. պանքայի
վրայով զրկէք .
— Ամերիկայի բաժանորդնե-
րէն կը խնդրենք որ իրենց
հասցէները շատ որոշ եւ պարզ
զրեն . յետոյ թող բարեհաճին
փոստայով գրամ զրկած միջոցին
իրենց անուններն ալ գրել :

Կնդապետ Եպանչին որ եկած
էր Պուլկարիոյ զինուորական վի-
ճակին հետ ծանօթանալու՝ Իե-
թերսպուրի սպայակոյն ին ժողո-
վասրահին մէջ զեկոյց մը կար-
գացեր է իր այդ ճամբորդու-
թեան մասին եւ յայտարարած է
որ Պուլկարական զօրքը շատ ար-
ժանիք ունի եւ ունեցած պակա-
սութիւնները դիւրաւ ուղղելի
են .
— Ատրիանապոլսէն Մակեդո-
նական բարձրագոյն կոմիտէի
օրկանի մէջ թղթակցութիւն մը
կայ . որու մէջ յօդուածագիրը
նկարագրելով այդ նահանգին
մէջ պուլկարաց կրած նեղու-
թիւնները կը աւելցնէ եւ հետեւ-
եալ սողերը՝ մեզի հետ հաւասար
չափով կը տանջուին եւ մեր եղ-
բայր վիճակակից հայերը .
— Աւայրտեղ կը յիշէ փաս-
տաբան Աւետիսի մը սպաննուիլը
առանց պատճառի, օրը ցորեկով
որու պատճառը եղած է միայն
թուրք փաստաբաններու նախան-
ձը գէպի իրենց խելացի եւ յա-
ջողակ հայ մրցակիցը .
— Օրմանեան Սուլթանին աւագ
հրատարականին բովանդակու-
թիւնը հաղորդած է նաեւ գես-
պաններուն .
— Ֆր. Չայթունի կը գրեն .
Պոլսոյ մէջ տարօրինակ բաներ
կը կատարուին հայերու վերա-
բերմամբ .
40 տարի առաջ Մարգրիւղի
մտ, Երուսաղէմի վանքին պատ-
կանող կալուածքի վրայ զիւղ մը
կը հիմնեն . այնտեղ տուններ շի-
նելու համար ընկերութիւն մը
կը հիմնուի . եւ բաժնեթուղթեր
կը հանէ հայերէն գրուած . բաժ-

Մնամք Գարգանօք
Ի գիմաց «Վասպուրականի»
Որբախնամ ընկ. հիմնադիր
անդամոց
Թ. Յ. ՃԱՆԿԻԻԿԱՆ Թ. Յ. ԱՂԱՍԵԱՆ
Վառնա, 30 Մարտ

—) (—

նեթուղթին մէջ գրուած է նաեւ
«Միութիւն» խօսքը, եւ լրտես մը
յայտարարած է թէ ընկերու-
թիւնը յեղափոխական նպատակ-
ներ ունի . Գիւղի բոլոր բնակիչ-
ները կը ձերբակալուին եւ հաղիւ
կրնան ապացուցանել թէ այդ
բաժնեթուղթերը մեր յեղափո-
խական շարժումներէն 15 տարի
առաջ տպագրուած են .
— Թրանսպալի մէջ գործերը
նորէն կը կնճուտին . Բոպերտս
եւ Քիշներ երկու երեք յաղթու-
թիւններէ յետոյ, հիմա սկսած
են դժուարութիւններու հանդի-
պիլ . Պօէրները բոլորովին յու-
սահատած չեն, տեղ տեղ շատ
նեղը կը ձգեն անդղիացիները .
գերի ալ կը բռնեն անոնցմէ .
վերջապէս վճարական բան մը
չը կայ . փոքրիկ ընդհարումներէ
որ տեղի կունենան երեսուտեք
փոքրիկ ֆիւսաներով .
— Անգղիական իշխանի վրայ
ատրճանակ արձակողը աւելի հա-
սակաւոր ընէ բներէն գրգռուած
ըրբը է իր փորձը . Եւրոպական
ամբողջ մամուլը կը շնորհաւորէ
իշխանին աղատմանը համար .
նոյնպէս եւ պետութիւններու
ներկայացուցիչները .
Եւրոպայում է նաեւ Թրանս-
պալի ներկայացուցիչը Տ. Լէյտս .
— Ատրիանապոլսոյ մէջ ստու-
կանութիւնը ձերբակալած է պուլ-
կար երկուսն . միջնակարգ վար-
ժարաններու տնօրէնը եւ ուրիշ
շատ մը պուլկարներ եւ անոնց
ստաները իուզարկած .
Պուլկար գործակատարի եռան-
դուն միջամտութեամբ ձերբա-
կալուած պուլկարները աղաւ-
ուած են .
«Նարոտնի Իրաւա» իր այդ տն-
դեկութիւնը կը վերջացնէ հե-
տեւեալ սողերով . թող չի մոռ-
նան որ Պուլկարիոյ բնակիչներու
մէջ վեցերորդ մասը մահմետա-
կաններ են .
Թ. Ա. Տ. Ո. Ռ. Փ «ՍԱՆԹՐԱԿ»
—
«Վէսէլլո» հայ գերտասնական
խումբը, այս գիշեր, Ապրիլ 1,
առաջին անգամ՝ ըլլալով պիտի
ներկայացնէ՝ «Լէյլա իլէ մէճ-
նուն», պատմական թատերգու-
թիւն 6 արար .
Միջնարարներու տանն ուս-
Պարոն եւ Տիկին Վլատիմիրօֆի
կողմէ Տուէթթօնի .
Վաղը կիրակի գիշեր, Ապրիլ 2,
պիտի ներկայացնէ «Աֆրիքանա»
երեւակայական արամ-գոմէտի 4
արար .
Միջնարարներու տանն ուս
Պ. Վլատիմիրօֆի կողմէ Տուէթթ-
թօնի .
—) (—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մ. Ա. Ն. Կ. Ա. Պ. Ա. Ր. Տ. Ը.
Տիկին Ե. ՉՕՐԵԱՆԻ (Ֆիլիպէ)

Ս. Ա. Ն. Կ. Ա. Պ. Ա. Ր. Տ. Ը.
Տիկին Ե. ՉՕՐԵԱՆԻ (Ֆիլիպէ)

Չ Ե Օ Ր Ե Կ Ի
ՍԻՐԱՅԱՐՆԵՐՈՒՆ

Եկածը Չարիկ է ո՞ր հայը չուգի
ուսել չէօրէկ . որ մեր սւանդական
հին տառիքներէն մէկն է .
Մեծ խնամքով, ախորժելի համով
ու հոտով չէօրէկ՝ Վասնայի մէջ
միմիայն կր ծախուի ՍԱՆԹՐԱԿ գա-
րեջրատունը . Տիրգրան Թ. Ֆիլիպէանի
քով .
Հոն գիմեցէք . ապանովապէս գոհ
պիտի մնաք .

Ա Ձ Դ

Շարաթ Ապրիլ մէկին երեկոյան
ժամը 5ին պուլկար բողոքականաց
ժողովարանը դասախօսութիւն պիտի
ըլլայ առձեռն լեզուաւ թէ Հին եւ
Նոր կտակարանները եւ Ղուրանը
ինչպէս են գոյացեր .
Ա. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Ռ. Փ

Գ. Ա. Յ. Ա. Կ.

Փ. Պօլսու Հաճի Հասան Փողոց
Տիկ. Տիրուհի Գ. Մարեան երկար
տարիներէ հետէ կը կատարէ զայնա-
կութեան արհեստը աննման յաջո-
ղութեամբ . կը բուժէ նաեւ կանանց
ներքին հիւանդութիւնները . Արդէն
գարմանած է բազմաթիւ կիներ . Աւ-
նի զանազան թշկտական վիճակա-
նի իր ձեռնհասութեան համար .

Մ. Ա. Ն. Կ. Ա. Պ. Ա. Ր. Տ. Ը.

Ս. Ա. Ն. Կ. Ա. Պ. Ա. Ր. Տ. Ը.
Տիկին Ե. ՉՕՐԵԱՆԻ (Ֆիլիպէ)

Կրնուցնուին 4—7 տարեկան մա-
նուկներ, գասերը առաւօտեան 9—12
եւ կէս օրէն վերջ 2—5 .
Հետո բնակող մանուկները ճա-
չերին կրնան մանկապարտէզին մէջ
ընել եւ մինչեւ գասերուն սկսուիլը
մասնաւոր հսկողութեան տակ իս-
ղայ .
Վճարը՝ ամսական ու թր լէվ .

Թ. Ա. Ն. Կ. Ա. Պ. Ա. Ր. Տ. Ը.

Ն. ՈՐ ԲԱՆՈՒՄԵՆ
Մ. Ա. Ն. Կ. Ա. Պ. Ա. Ր. Տ. Ը.
Թիւ 389 Իսկիլի-պաշի

Կը վաճառուի ծրարտա, բաժնայի
եւ աղերսագրի ամէն տեսակ բուրբ
նաեւ զանազան տեսակ սիկարներ .
Ծէ թուականին հրատարակելով
Պուլկարիոյ գահաժառանգ Պօլիսի
պատկերազարդ քառթ-փոթիկներ .
որ այժմ չեն գործածուիր . նոյնպէս
եւ կը վաճառուի «Շարժում» .
Շարժումը կը ծախուի նաեւ նա-
մակատան իմաց նոր բացուած փոք-
րիկ գրատունը .
Նաեւ Շարժումը կը ծախուի Ա.
Չարհանէլեանի գրատունը եւ իրմ-
բագրութեան մէջ .

ԻՄՔԻԿԻՐՈՒԹԻՒՆ ԳՆԱՐԺՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցեատման, հասցէտման, նամա-
կագրութեան, հարսանեկան հրաւի-
րագիր, մահազգ .

Իրենքը յոյժ գիւրամատչելի
Աւրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշգու-
թեամբ եւ փութով կը կատար-
ուին .

ԹԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԻՆԻՍԻԿ